ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի 1-ին կիսամյակում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 15254.1 մլն դրամ՝ պլանավորված 13913.9 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 9.6 տոկոսով կամ 1340.2 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 18.7 տոկոսով կամ 2407.7 մլն դրամով:

Հունիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2675.5 մլն դրամ՝ պլանավորված 2244.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 19.2 տոկոսով կամ 431.5 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 18.5 տոկոսով կամ 416.8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 138 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 5 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 23 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 30.8 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում շարունակվել են հսկողական միջոցառումները, որոնց արդյունքում արձանագրվել են վարձու աշխատողների չձևակերպման 47, հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների խախտման 11 ու ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 2 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 155 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 101-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 28-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 7-ը՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության, 5-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման

կանոնների պահպանման և «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքի համաձայն ճշտված հաշվարկ-հաշվետվություններ ներկայացրած հարկ վճարողների՝ հարկային և այլ պարտադիր վճարների պարտավորությունների արժանահավատության և 9 այլ ուսումնասիրություններ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 38 վարչական գործ՝ 24.6 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 1 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 4.1 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 257 վարչական գործով սահմանվել է 4.6 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6737 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5324:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 73 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 11 վարձու աշխատողի՝ 1.4 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 56 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ֆինանսների նախարարի հրամանով սահմանվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Դ» սերիայի դրոշմապիտակի նմուշը և տեխնիկական պահանջները», որը ԼՂՀ կառավարության որոշմամբ 2017 թվականի հուլիսի 1-ից դրվել է կիրառության մեջ: «Գույքահարկի մասին» ԼՂՀ օրենքում 2017 թվականի հունվարի 1-ից կատարված փոփոխությունների համաձայն նախարարի հրամանով լրացումներ և փոփոխություններ են կատարվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2004 թվականի ապրիլի 19-ի «Գույքահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» թիվ 16/Ղ հրամանով հաստատված հրահանգում:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հաշվետու ամսում հարկային ծառայողների մասնագիտական պատրաստվածության ու արհեստավարժության բարձրացման նպատակով հարկ վճարողների սպասարկման, հաշվառման և վերահսկողական գործառույթ իրականացնող թվով 90 աշխատակիցների համար կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ՝ «Հարկերի և պարտադիր վճարների հաշվարկում», «Հարկային ստուգումներ և հսկողություն», «Հաշվետվությունների կամերալ ուսումնասիրությունների անցկացման ընթացակարգ», «Հաշվետվությունների լրացման ընթացակարգ», «Անձնական հաշվի քարտերի վարում», «ԼՂՀ տարածք ներմուծվող և արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառում» և «Հաշվապահական հաշվառման ստանդարտներ» թեմաներով:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2017 թվականի 2-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 750 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են 2016 թվականի տարեկան արդյունքներով հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 389, ելքագրվել՝ 162 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն, որից 3-ը՝ «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով: